

**Տ. ԶԱՏԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՔՅԱՆԻ ՔԱՐՈՉԼ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷՇՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ
ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻՒՆ
(21 ապրիլի 2002 թ.)**

«Յանուն Հօր և Որդույ և Հոգոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավաքացայ քոյքը և եղբայրներ.

Յուրաքանչյուր հայ հոգևորականի համար առանձնակի հուզում է բարձրանալ այս Սուրբ Խորանը, որով և հոգևորականի հոգին լցում և նորոգվում է, սիրով լրց-վում է ուրախությամբ, իսկ միտքը հարսփանում և ազնվանում:

Ուստի պատրազ է այսօր ինձ համար՝ հաղորդվելու 1700-ամյա մեր պատ-մության հետ, վերընթերցելու և վերանայելու մեր հայրերից մեզ թողած հարուստ ժառանգությունը:

Այսօր Ն. Ս. Օ. Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին այս առթիվ կու-զեմ հայկնել որդիհական իմ անկեղծ շնորհակալությունն ու երախսրագիրությունը՝ ինձ այս գեղեցիկ առիջեն ընծայելու համար, առիթ՝ ձեզ հետ միասին աղոթելու: Հայոց Հայրապետի արքունությամբ ցանկանում եմ նաև ողջունել այսօր ներկայությունը մեր մեջ Եվրոպայի զանազան երկրներից, Ֆրանսիայի վարքեր շրջաններից, քաղաքներից մեր հայրենի աղոթավները ուստի Եկած Եկեղեցական սպասավորնե-րին, ովքեր իրենց աղոթքով այսօր միացել են մեզ՝ Քարձրյալից խնդրելու գորացումը հավաքից մեր ժողովրդի և ծաղկումը իր հարազար Մայր Եկեղեցու, որն է Առաքե-լահիմն ու լուսավորչակերպ մեր պատրմական Եկեղեցին, և որի հարազար և սիրելի զավակներն են ձեզանից, մեզանից յուրաքանչյուրը:

Մուր քան օրեր առաջ կամ երեք շաբաթ առաջ մեր Եկեղեցին քրիստոնյա այլ Եկեղեցիների հետ գոնախմբեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հրաշակառ Հարութ-յունը, որը իմքն է և մեր քրիստոնեական եռթյան և ինքնության: Ինչպես Պողոս ա-ռաքյալ Կորմթացիներին ուղղված իր թղթում է ասում, որ եթե չենք հավաքում Քրիստոսի Հարության, ուրեմն ավելորդ է մեր քարոզությունը և իմաստից ու բովան-դակությունից գորկ է մեր հավաքը:

Այսօր չիավարալ Քրիստոսի Հարության, նշանակում է դադարել քրիստոնյա լինելոց, ինչպես նաև արժեքից ու նշանակությունից կզրկվի քրիստոնեական մեր մկրտությունը, որը բանալին է հոգևոր ընդունիքից ներս մուտք գործելու:

Այսօր գլուխում ենք Քրիստոսի Հարությունից հետո ծիսական ուրախ շրջանի մեջ, քառասուն օրերի կյանքի վոնախմբման, մահվան դեմ կյանքի հաղթանակի:

Սիրելիներ, քառասունը խորեղանշական թիվ է, թիվն է սպասումի, թիվը կարե-վոր մի դեպքի, դեպքի իրականացման, վոկտիոնթյան կամ բարեկիրման:

Քառասուն թվի շորջ բազմաթիվ վկայություններ ունենք ինչպես Դին Կրակա-րանի ավանդության, այնպես էլ Նոր Կրակարանի պատրմության մեջ: Դին Կրակա-

րանից գիտենք. քառասուն օրեր վկասող ջրհեղեղից հետո Նոյան դապանը իշխավ Արարափի փեշերին, որին է հիմք դրվեց նոր մարդկության և այդ ձևով Արարափի երկիրը հանդիսացավ այդ նոր մարդկության ծննդավայրը, նոր կյանքի օրրանը:

Մովսես քառասուն օրեր Սինա լեռան վրա մնալուց, հոգևոր գորավոր պահեր ապրելուց հետո սփացավ գրանարանյա պարզվիրանները: Դրես ժողովությոր քառասուն դարի մնաց անապափի գերության և փորձառության մեջ:

Նոր Կրակարանից գիտենք, որ Դիտու ծնունդից քառասուն օր հետո բերվեց Տաճար, որ կարարվեց նաև Աստվածամայր Մարիամի սրբացման արարողությունը, որը մենք գրոնախմբում ենք Տյառնընդառաջի ատիթով: Դիտու մկրտությունից քառասուն օր հետո առանձնացավ անապափի մեջ խորհրդածելու, պատրաստվելու, բայց, հավկապես, փորձության ենթարկվելու և հաղթությամբ կարողացավ իր քառզշական առաքելությունը սկսել այդ քառասունօրյա առանձնացումն վերջ:

Գրեթե քառասուն ամիս վեսեց Քրիստոսի քառորդությունը երկրի վրա: Դիտու թաղումից հետո մովավորապես քառասուն ժամ մնաց գերեզմանի մեջ և այնուհետև հարություն առավ: Հարությունից հետո քառասուն օրվա ընթացքում էր, որ Դիտու երևաց Իր աշակերդներուն, և քառասուն օր հետո էր, որ եղավ Համբարձումը:

Եվ մեր մարդկային կյանքում մահից քառասուն օր հետո քառասունքի արարողություն ենք մենք կարարում: Մեր ազգային կյանքում խորհրդական է նաև, որ քառասուն օրեր վեսեց Մուսալեռան հերոսական պայքարը:

Իսկ այսօր, ըստ մեր եկեղեցական գրոնացույցի կամ օրացույցի, Կարմիր կիրակի է, կարմիր, որ գոյնն է արյան, խորհրդանիշը կյանքի, կյանքի համար պայքարի ու հաղթանակի: Հաղթանակ քրիստոնեական ոգու, բայց հավկապես հաղթանակ քրիստոնեական ըմբռումից: Այդ հաղթանակին ժառանգորդ լինելու համար մեր Եկեղեցվոր Հայրերի կողմից մեզ մատուցվող այսօրվա սուրբքական ընթերցումները լավագույն զենք կարող են հանդիսանալ, զենք, որ ներշնչում է, ջամբում է հոգևոր սնունդ, ու այլ կյանքի կոչում:

Ավետարանի, Հովհաննու Ավետարանի հավկածը մեզ սովորեցնում է Հայր և Որդու միասնական գործունեությունը մեր կյանքի մեջ:

Ինչ որ Որդին անում է, Նոր անունից է անում, Նոր թելադրանքով և Նոր օգնությամբ: Հայր և Որդի և մենք՝ մարդկությունը այս երկրի վրա, և Որդին Դիտու կամուրջն է, այն գեղեցիկ կամուրջը, որ մեզ կկապէ Նոր հետ, Որդին որպես հայրական սիրո լավագույն արքահայպություն աշխարհի վրա:

Այսօր կարդացված երկրորդ հարվածը Պետրոս առաքյալի ընդիհանրական առաջին թղթի 5-րդ գլուխն էր: Քրիստոսի առանձնաշնորհյալ ծառան 2000 դարիների հեռավորությունից նորոգում է այսօր իր երրորդ մեզ համար, որը երրորդ է խոնարհության, երրորդ հեղության և հնագանդության հանդեպ մեր ծերերին, մեր մեծերին: Ծեր, որ սուրբքական իմաստով նշանակում է կյանք ապրած, փորձառություն և իմաստություն ձեռք բերած դեկապ, առաջնորդ, ու պատրասխանափու անձեր, որոնցից մենք շատ սովորելիքներ ունենք և կարող ենք դաս քաղել: Ծեր իմաստունները մեր կապն են մեր անցյալի հոգևոր ժառանգության և հարստության հետ: Բոլորու-

վին կրովել անցյալից, նշանակում է հիմքը դնել կործանումի մեր ինքնության, լինի այդ կործանումը հոգևոր թե մշակութային, լինի դա ազգային թե քաղաքական: Պետքու առաջալը մեզ հորորում է նաև հեգությամբ և խոնարհությամբ միմյանց ծառայել, միմյանց օգտակար լինել, չարհամարել մեր շրջապատի մարդկանց, որոնցից յուրաքանչյուրի միջոցով մենք կարող ենք հարսկացնել մեր ինքնությունը:

Հարսդությունը, սիրենի ժողովուրդ, ոչ միայն սրանալու կամ ընդունելու մեջ է, այլ նաև օգնելու, նվիրելու և զոհողություն ու նվիրադպություն կապարելու մեջ է: Նվիրվենք իրար, վարահենք իրար, ծառայենք իրար, օգնենք իրար, ուրախանանք յուրաքանչյուրի հաջողությամբ և մրահոգենք ու փիրենք որևէ մեկի ձախողությամբ, իմանանք օգնության ձեռքեր մեկնել, լինենք սիրու սրբի, լինենք միտք մրգի: Նեգությամբ խոնարհվենք Ասպուծ հզոր Աջի առջն, մեզ թելադրում է առաջալը, այդ օրինյալ Զեռքին, որ մեզ միշտ մեր խոնարհությունից կարող է բարձրացնել, մեր հոգսերը վարահեցնենք, հայդնենք Հայր Ասպուծ, սիրովերնիս լայն բանանք, ներկայանանք Ասպուծոն:

Հայր Ասպուծ մենք լավ, շաբ լավ է հասկանում և գիտի յուրաքանչյուրիս կարիքն ու պետքը: Ուրեմն, Ասպուծ սիրու մեջ համոզված լինենք և արթուն՝ որևէ թշնամանքից կամ զայթակղությունից մեզ պաշտպանելու համար, քանի որ Ասպուծ է փառքը, Ասպուծ է պարիվը, Ասպուծ է զորությունն ու Արքայությունը, Որի Նարուցյալ Որդու առջև կանգնած Խր իսկ աշակերդները Գալիխու լեռան վրա մի պահ կասկածեցին ու երկմրտեցին, ինչպես մեզմն յուրաքանչյուրը պիտի կասկածեր կամ երկմրտեր հարազարդի մահից հետո անոր հարուցյալ հանդիպելիս: Եվ որպեսզի աշակերդները համոզվեն, և նրանցից հեռանա իրենց կասկածը, Հիսուս անոնց մորեցավ, որպեսզի ճանաչեն Ֆիզիկապես, որ նոյն հնքն է Հիսուս, Որին դարձներ լսելու և հետևելու առիթն ունեցան:

Հիսուս ոչ միայն նրանց մորեցավ, այլև խոսեց՝ ճայնով և համոզելու համար և պատգամը դպից մեզ բոլորիս առաջանենքի միջոցով. «Գնացեք, այսուհետև աշակերդեցեք աշխարհի չորս ծագերը, մկրտեցեք հեթանոսներից Հոր անունով, Որդու անունով և Սուրբ Հոգու անունով և սովորեցրեք նրանց պահել պատվիրանները» (հմմբ. Մադթ. Իլ 19): Տերը նաև ասաց. «Ես միշտ ձեզի հետը պիտի լինեմ մինչև աշխարհի վախճանը»: Այսպես աշակերդների ազերը բացվեցին՝ մրգի ու հոգու ազքերը, հավաքացին Հիսուսի հարությանը և, համաձայն Յուղաբեր կամանց վկայության, որ առաջին վկաներն էին Քրիստոսի Հրաշափառ Հարության, կարողացան ուրախությամբ և ցնծությամբ հայդնել: «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, օրինեալ է յարութիւնն Քրիստոսի»:

Մենք ևս միասին ըստենք. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, օրինեալ է յարութիւնն Քրիստոսի»: Թող Նարուցյալ Քրիստոս օրինի ձեզ բոլորդ, օրինի ձեր աղոթքները, օրինի ձեր սիրովերը և ձեր միտքերը, որպեսզի դուք ալ ամեն օր, ամեն վայրկյան կարողանաք փառք դալ Ամենասուրբ Երրորդությանն, այժմ և հավիպյան հավիպենից. ամեն: